


Ուղղելի են հոգեւոր դարձի հայրապետին՝ որ տուաւ նոցա ... և զըբբութիւն սրտաւորեան անձանց ... — Ս. Ներսեսի համար ամենայն Հայոց այսինքն կղկաթ կաթողի էր և պահօք՝ և աղօթքով և ուխտ զնեւ լով կ'աղերսէին շուտով վերադարձին. և ահա որչոր ժողովուրդն «բազում հոգեւորս մեծաւ ցնծութեամբ» տուն կը կատարեն «վասն դարձի» հայրապետին: Գոհ է ժողովուրդն որ իւր ուխտն և խնդրուածքը կատարուեցաւ, որք մնացեր էր, լցուեր էր տրտմութեամբ սրտերնին, սրտաուշ մնացեր էին բայց Աստուած միւս անգամ իրենց «սրտաութիւն անձանց ... հոգեւոր հարբն միախարեաց» ...

96. էջ 110. տող 3. Իսկ թագաւոր Արշակ .. ի կողմանս Բաքսանայն .. — Արշակ թագաւոր ընդ առաջ կը գնայ Ս. Ներսեսի մինչեւ «ի կողմանս Բաքսանայն»։ զա ինչ անուն է և ո՞ր տեղ պէտք է որոշել: Առաջին. Թուրի անունն աղաւաղումն երկու յայտնի գաւառաց Բագրեւանդայ և Բասենոյ, երկրորդ Բագրեւանդայ և Սիւսնի. Բագրեւանդ է այն յայտնի գաւառն որ լի է պատմական յիշատակներով ուրախ և տրտում էջեր ունի տարեգրութեանց մէջ, սահմանակից ընդ Բասենոյ ուր ոչ պակաս երեւելի անցքեր անցեր են. և որ զլիսաւորն է, այդ երկու գաւառներէն կ'անցնէր կեսարեայէն բերող ճանապարհն՝ որ կարելի է արքունի կոչել, և անցնելով Երազկոտն գաւառէն Գարունից բերդի տակէն կ'իջնէր ի Հեր և Զարուանդ և կ'երթար Թաւրէշ ճաղար ...: Ուրեմն Ս. Ներսեսը գալով ի Բասան, Հոն կը փութայ Արշակ որ թերեւս այն կողմերը կամ ի Բասանն էր յամարային ժամանակս: Հետեւապէս աղճատեալ բառ է Բակասերոյն, բեկորներ են Բագաւանի և Բասենի կամ Բագաւանի և Սիւսնի: Թերեւս բունագրօսեալ Թուրի յարմարագրութիւնս, սակայն տես էջ 117 ուր յիշատակութիւն լինի և Բագաւանին և Սիւսնեացն? կամ էջ 119 Սիւսնն: Շատ կարելի է որ նախնական քնագիրն եղած է ... Արշակ «եր-

թայր ընդ առաջ նորա մինչեւ ի կողմանս Բասենոյ և անտի մեծաւ զուարթութեամբ դարձան ի Բագաւան»: Որովհետեւ քնազրի մէջ թէ և ասում է դարձան, բայց ո՞ր, չկայ. եթէ այսպէս ընդունելի լինի ընթերցուածս, կը հետեւի որ Բաքսաներոյն յիշեալ երկու անունաց վիժումն է:

97. էջ 110. տող 32. Արդ դու տակաւին ... պարծանօք յայտնապէս պատմի ... — Ուղղ. պատմի: Պատուել զախտս» սովորական դարձուած է առ դասական գրիչս. այստեղ ընդօրինակողն հանդիպելով «պարծանօք» հետեցուցեր է որ պէտք է յայտնապէս պատմել. մինչ եթէ իմաստն հասկանար, և զխտեար որ Արշակ արձակ համարձակ անօրէնութիւն կը գործէր և չէր քաշուեր այլ կը պարծենար, կը գրէր «պատուել»: Տես էջ 244. տ. 27, և էջ 247. տ. 1:

Շարունակելի
Հ. Գ. ՆԱԼԱԳՅՏԻՆՍ



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ *

(Ի ՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ-ՊԱՍՏՄԱԿԱՆ)

Ա. Հայ Կաթողիկոսը իշխանութիւն չէ ունեցած ըլլող շայն վրայ. Որո՞ք ազատ էին ամոր հպատակել:

Զարմանք մը պիտի պատճառէ անշուշտ ըսելը որ կաթողիկոսը բոլոր Հայոց վրայ իշխանութիւն չունէր. այսինքն, այն հայերը որոնք ուղղափառ կենսաբոյ մետրապոլիտին իշխանութեան ներքեւ էին և կամ Աղթամարայ և Սոյո կաթողիկոսաց հպա-

* Այս խորագրով ամբողջական գործ մը պատրաստած ըլլալով՝ Բագաւանի վրէժն սկսած էինք կրտսերակէ ստալին երեք զուխները. Ա. Կաթողիկոս քան զործածութիւնը. (Ռգմ. 1902. թ. 12), Բ. Կաթողիկոսի ընտրութիւնը (անդ). Գ. Զեւարթուցութիւն Հայ կաթողիկոսին (Ռգմ. 1908. թ. 4): Մի քանի միջանկեալ խնդիրներ զանց ընելով կրտսերակէ Հանդիսն մէջ (այն է «Սոսուն» և «աստիճան» քը Կոյ կաթողիկոսին), Զարթոյր զիւրջ երկրորդ յօդուածէն կը սկսինք շարունակել:

տակ՝ ազատ էին զլիսաւոր և օրինաւոր կաթողիկոսին հպատակելէ. այս ըսածս կըրնայ ենթադրուիլ արդէն Ազաթանգեղոսի հետեւեալ գրածէն. Սուրբ Գրիգոր՝ կեսարիպէն Սերաստիա գաւով՝ « գտանէր (անդ) բազմութիւն եղբարց՝ զոր հաւանեցուցանէր ընդ իւր գաւ, զի վիճակեցուցէ զնոսս ի քահանայութիւն իրումս աշխարհիկն » (Ազաթանգեղոս ՃԺԳ). և մասնաւոր որ Սերաստիան նոյն իսկ Գր. Լուսաւորչէն առաջ Հայոց մետրապոլտական աթոռն էր, Մեծ Հայերէն անկախ, ինչպէս որ Եպիփան կիպրացին կը գրէ. « Աստիճանք մետրապոլտաց ... (նախառաջին) Հայոց՝ ի Սերաստիա » (էջ 4): Նոյն գրքին մէջ դարձեալ ինքնադուիս եպիսկոպոսաց ցանկին մէջ կը գրուի « (Նախ) Հայոց՝ Խոսակ լիուպաւլիս: (Նախ) Առաջիկո Սերաստիա քաղաք »: (էջ 8): Իսկ յէջ 20՝ կեսարիոյ մետրապոլտին իշխանութեան տակ կը համարուի նաեւ « Թէոդուպաւլիս Հայոց », եպիսկոպոսական քաղաքը:

Ներոս Գոքապատիո՞ւ՝ Մելիտինէն ալ արքեպիսկոպոսական կամ մետրապոլտական քաղաքաց թուոյն մէջ կը հաշուէ ու կը գրէ. « Մելիտենի Հայոց ունի եպիսկոպոս Ե. ուստի և նորին եպիսկոպոս է կոկիտոն »: (էջ 30):

Ըստ իս բուզանդայ սա պատմական դէպքը՝ շատ կը սահմանափակէ կաթողիկոսին իշխանութեան տակ գտնուող նահանգներու թիւը. « Մեծն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնն, զի հընգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իրրեւ սեպակսն ի բնմէ (ի բնէ), առանձին առողջի նոցա էր կար-

գեալ: Եւ այն գաւառ զլիսաւոր գաւառց այս էին. Ալրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Մոփք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնորոց »: (Դպ. Դ. Ժդ): Տարօրինակ պիտի ըլլայ այդ սեպակսն բառին համար՝ Ներսիսի անձնական ստացուածքը համարել այդ հնգետասան գաւառները:

Մովսէս Խորենացոյ մէջ ամենայայտնի կը տեսնուի հայ կաթողիկոսին իշխանութիւն չունենալը այն Հայոց վրայ՝ որոնք Յունաց քաղաքական իշխանութեան ներքեւ էին. Ս. Մետրովք ահա չի՞ կրնար իր գրելը այդ Հայոց սովբեցնել « Ընդ այն ժամանակս եկեալ Մետրուպայ և բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս . . . ուսոյց զբնա կողմանս բաժնոյն (Պարսից), բաց ի Յունաց մասնէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան, սխակեալ յաթոռն կեսարու »: (Գիրք Գ. գլ. Ժդ):

Նոյն Խորենացոյ հետեւեալ խօսքն ալ կը հաստատէ որ Ս. Սահակ՝ կաթողիկոսի արժանաւայել պատիւ չէր գտած, երբ « գնաց զկողմամբք արեւմտից մերոյ աշխարհիս ի բաժնին մասինն Յունաց, և ոչ ըստ արժանեաց իւրոց եղև ընկալեալ » (Գ. Ժէ). այս պատճառաւ զանգատանաց թուղթ մը գրեց նա Թէոդոս կայսեր, պահանջելով այն իրաւունքը զոր կորուսած էր իր նախնեաց աթոռը, ձեռնադրութեան ինքնոյն պատճառաւ. « Ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա. այնչափ աւտեցեալ զմեզ, մինչ զնշանագիրս անգամ ոչ ընկալան » (Անդ):

Կ'երեւայ գանգատը մասամբ մ'ալ կե-

1. Այդ մետրապոլտին իշխանութեան ներքեւ էին ետեւեալ էնդ եպիսկոպոսական քաղաքները. Ժամ զի Եպիփանոս. Նոյն գրքին մէջ (յէջ 26), կը գրուի « Սերաստիոյ Հայոց եպիսկոպոսք. — Սխառուպաւիս՝ Ա. Նիկուպաւիս՝ Բ. Սասարիս՝ Գ. Բերսան՝ Դ. Արեւդալ՝ Ե »: Իսկ ըստ Ներսիսի՝ շրջ սպասակ եպիսկոպոսական քաղաք ունի Սերաստիան (յէջ 30):

Կամանի ալ առանձին մետրապոլտութիւն մը կը համարուի և՛ ընդ եպիսկոպոսական սմոն ունի իրն հպատակ (ըստ Եպիփանոս, էջ 38) « Կամախ Հայոց ունի եպիսկոպոս Ը. Կերեալենիս՝ Ա. Արարակա՝ Բ. Բարզանիս՝ Գ. Մելու՝ Դ. Միւլեւեառերոս՝ Ե. Պարզանիս՝ Զ. Ռամանուպաւիս՝ Զ. Տուրիլուս՝ Ը »: Իսկ ըստ Ներսիսի՝ կամախ ունի Հինգ եպիսկոպոս (էջ 32):

2. Եպիփան (էջ 26), « Մելիտինի Հայոց ունի եպիսկոպոս եօթն: Կոկիտոն Հայոց՝ Ա. Տարեճա՝ Բ. Ալուսաթալ՝ Գ. Արփոս՝ Դ. Ռամանն՝ Ե. Ճճա՞՞ Զ. Հաննի՝ Է »:

3. Ձեռնադրութեան ինչպէս առաջ ալ արդեն այդ Հայոց մի մասը, կետարիս մետրապոլտին կը նշագածդեր, ինչպէս կ'պատասխանի Ս. Բարդէի թղթերէն, (ինչ որ յիշած ենք մեր նախորդ յօդուածին մէջ):

սարիոյ մետրապոլիտին վրայ է, վասն զի թէ՛նդոս կայսրը կը գրէ Ս. Սահակայ . « Գրեցաք՝ զի ամենայն փութով ուսցին և զընզ պատուով ընկալցին՝ որպէս զարգարեւ վարդապետ իրեանց, Նսեցայն արքեպիսկոպոսիկն կեսարու » . և Ատտիկոս , կ. Պոլսոյ պատրիարքն ալ կը գրէ . « Տուեալ լիցի ընզ ի խառնութիւն վարդապետել զկողմնը մեր , և աղանդոյդ բորբորտոնաց՝ կամ հաւանել , և կամ հալածել ի բում վիճակէդ » (Գ. ծէ) :

Այս պատմական ղէպերէն կրնանք սա ընզհանուր եզրակացութիւնը ընել՝ թէ « Ուր որ հայ թագաւորը կ'իշխէր՝ հոն ալ իշխանութիւն ունէր կաթողիկոսը թէ՛ կղերի վրայ ուղղակի և թէ՛ ժողովրդեան վրայ անուղղակի » :

Երկոտասաներորդ դարու մէջ կաթողիկոսներու բազմութիւնը ի նմին ժամանակի՝ փնասեցին օրինաւոր հայրապետին իշխանութեան ընդարձակութեան : Հակաթոս կաթողիկոսները իրենց իշխանութեան տակ ըաղաքներ և զիւզեր ունէին : Այդ հակաթոսները կարճատեւ եղան : Դոյն դարուն մէջ, 1113ին , Գաւիթ ապստամբելով օրինաւոր Հովնակոսէն՝ Աղթամարայ մէջ առանձին կաթողիկոսութիւն մը հաստատեց որ դեռ կը շարունակուի :

Հնգետասաներորդ դարուն մէջ ալ (1441) երբ կաթողիկոսական աթոսը Սսէն Էջմիածին փոխադրուեցաւ՝ Գրիգոր Մուսարեկեանց իր կաթողիկոսութիւնը Սսոյ մէջ շարունակեց . և մինչև վերջ այդ աթոսն ալ անկախ Էջմիածինէ՝ իր յաջորդութիւնը շարունակեց : Ինքը թէ՛նւ օրինաւոր կաթողիկոսն էր , բայց Հակոբոս Նկատուեցաւ , վասն զի ազգին մեծամասնութիւնը Էջմիածին նստողը օրինաւոր ընդունեց : Ի սկզբան՝ այդ երկու աթոսները բոլորովին կորած էին իրենց յարաբերութիւնը Էջ-

միածնայ հետ , և Էջմիածնայ կաթողիկոսը ո՛չ թէ միայն այդ Հակաթոսներուն վրայ իշխանութիւն չունէր , այլ և ոչ իսկ անոնց թեմերուն :

Արարատ ամսագրին մէջ՝ այդ երեք կաթողիկոսական թեմերը կը նշանակուին այս կարգաւ .

Ա. — Թեմ կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի որուն հպատակ են կ. Պոլսոյ և Ելրուսաղեմի պատրիարքները իրենց թեմերով :

Բ. — Թեմ կաթողիկոսութեան կիլիկիոյ (Սսոյ) . որ իրեն իշխանութեան ներքեւ 13 քաղաք ունի :

Գ. — Թեմ կաթողիկոսութեան Աղթամարայ . իր իշխանութեան ներքեւ են միայն Աղթամար և կարկար :

Այս ցուցակէն կը հետեցուի որ Էջմիածնայ կաթողիկոսը Աղթամարայ և Սսոյ թեմերուն վրայ իշխանութիւն չունի :

Ժամանակ մը եղած է նաեւ որ Սիւնեաց մետրապոլիտը ապստամբած էր կաթողիկոսէն , ինչպէս կը գրեն Ստ. Օրբեւլեան և Մովսէս Կաղանկատուացին թէ՛ իր Մովսէս Եղիվարդեցույ ատեն կաթողիկոսական աթոսը երկուքի բաժնուեցաւ՝ Սիւնեաց առաքինի մետրապոլիտը Պետրոս՝ « պատուէր ևս վիճակին իւրոյ առնուլ զձեննադրութիւն յԱղվանից և զՄիւռոնն օրհնութեան »¹ . բայց Անանիա կաթողիկոսը « բազում աշխատութեամբ հնազանդեցաւ զՍիւնիք » ինչպէս կ'ըսէ վարդան պատմագիր² :

Բնականաբար չունի իշխանութիւն նաեւ այն Հայոց վրայ՝ որոնք իր դաւանանքը չունին :

1. Հմմտ. Արարատ , Էջմիածին 1888 , էջ 190-1 , Յուսիկ վարդապետն (այժմ եղիկոպոս) յօդուածը :

2. Թեմերորդ գլխուն մէջ այս աթոսոց վրայ պիտի խօսեմք ուր ընթերցողը պիտի տեսնէ թէ ժիւ դարու

վերջեր սահմանափակ ունեցաւ այդ աթոսոց իշխանութիւնը ու հպատակութիւնը :

3. Հմմտ. Մովսէս Կաղանկատ . հտ . Ա . գլ . իր :

4. Տպ . ի վեճեա . էջ 89 :

Բ. Հայ կաթողիկոսը որիք ազգերու վրայ
իշխանութիւն ունեցա՞ծ է .

1. — Հայ կաթողիկոսը ժամանակաւ
Վրաց և Աղուանից վրայ կրօնական իշ-
խանութիւն ունեցած է, թէ՛ն ալք իշխա-
նութիւնը բացարձակ չէր, այլ մասնակաւ .
և պատճառն ալ այն կը համարինք՝ որ
անոնք մեր առաջնորդութեամբ ընդունած
են քրիստոնէութեան լոյսը, ինչպէս որ
Վրաց դարձին համար կը պատմեն Ազա-
թեան գեղոս և Խորենացին:

Նունէ, Հոբոսիմեանց ընկերներէն մին
Վրաստանի մէջ հրաշագործելով՝ ժողովուր-
դեան ուշադրութիւնը կը գրաւէ. անոնց
թագաւորը Միհրան լսած է Հայոց դար-
ձը, Տրդատայ մոռնալը որսի ժամանակ.
նոյնպիսի դէպք մը զինքը և իր ժողովուր-
դը քրիստոնէայ կ'ընէ. նա երբ որսի կ'եւ-
լէ՝ « մոլորեցաւ ր դժուարս լերանց խա-
ւարեալ օդով, այլ ոչ տեսնելեօք » . այն
վարկեկէնի կը յիշէ Տրդատայ դէպքը, և
Նոնէի Աստուծոյն կ'աղօթէ որ օդը լու-
սաւորէ — զինքը պաշտելու պայմանաւ .
կը լսէ Աստուած իր աղօթքին և Միհրան
երդմեազանց չըլլար: Նոնէ երբ կը տես-
նէ Վրաց պատրաստակաւնութիւնը՝ քրիս-
տոնեայ ըլլալու՝ Գրիգոր Լուսաւորչի կը
զիմէ որ հոն եպիսկոպոսներ և քահանայ-
ներ զրկէ, որուն խնդիր իսկոյն կը կա-
ռարէ Հայոց Լուսաւորչի. և այս պատ-
ճառաւ ուրեմն Հայ կաթողիկոսը Վրաց
եպիսկոպոսը ձեռնադրելու իրաւասութիւ-
նը կը ստանայ:

Սակայն Վրաց պատմիչը Զուանշիր ու-
րիշ կերպով կը ներկայացնէ Վրաց դար-
ձը. Յոյն եկեղեցականները և կոստանդիա-
նոս « Առաքեցին եպիսկոպոս մի Յովհան-
նէս կոչեցեալ, և քահանայս երկու և սար-

կաւազս երիս՝ ». ասոնք կը մկրտեն շա-
տեր, յետոյ « առաքեաց Միհրան զՅով-
հաննէս և այր մի աւագ ընդ նմա առ կոս-
տանդիանոս, և խնդրեաց յորովութիւն քա-
հանայից ». բայց թէ որքան ստուգութիւն
ունի այս՝ չգիտեմ:

Այս ստոյգ է որ կը հանդիպինք ի պատ-
մութեան Հայ կաթողիկոսին Վրաց եպիս-
կոպոս—կաթողիկոսը ձեռնադրելը և այդ
նոյն իսկ Զուանշիր կը պատմէ: Վրաց ա-
ռաջին եպիսկոպոսը վերոյիշեալ Յովհան-
նէսն էր, մեր Լուսաւորչին և Արիստա-
կեսի ժամանակակից . անոր կը յաջորդէ
Յակոբ (Զուանշիր, էջ 7(1)). « և յետ նորա
Ներսէս՝ կաթողիկոսն Հայոց՝ ձեռնադրեաց
գասարիւսազն իւր զՅակոբ՝ եպիսկոպոս Վրաց
և առաքեաց », (Անդ). ասոր կը յաջորդէ
Եղիա, որուն հայ կաթողիկոսէն ձեռնա-
դրուելը չի յիշատակուիր. « Եւ զկին ննջման
եպիսկոպոսին Յակոբայ՝ կացոյց (բազա-
սար) ի տեղի նորա զԵղիա », (էջ 72):

Սոյն պատմիչին ուրիշ դէպքը յայտնի
կը ցուցնէ թէ Վրաց եպիսկոպոսները
պարտը չունէին ի հայ կաթողիկոսէն ձեռ-
նադրուել. « Կայսրն (Յունաց) և պատ-
րիարքն կոստանդնուպոլսոյ՝ առաքեցին
զՊետրոս քահանայ (յամի իրբիւ 475), և
զՍամուէլ կրօնաւոր յԱնտաք, զի անդ առ-
ցեն ձեռնադրութիւն, զի ձեր է ասն վի-
ճակն այն. Եւ կատարեալ զինդիրքն՝ ար-
ձակեցին զնոսա ի վիրս իսկ թագաւորն
վախթանգ չոգաւ, և ի Գարթլ, և ել ընդ
առաջ նորա, և ամենայն փառաւորքն
Վրաց . . . Անտիոքու պատրիարքն ի
ձեռնադրելն զՊետրոս կարսպիկոս՝ արար
նմա երկոտասան եպիսկոպոսունս » (Զը-
ւանշիր, էջ 90-91). և Միքայէլ որ Վրաց
եպիսկոպոսն էր՝ կը դժկամակի, սակայն
զինքը գահընկէց կ'ընեն (Անդ, էջ 90):
Եւ այս թուականէն վերջ Պետրոսի յա-

1. Տես Զուանշիր հրտ. ի վեհնեակի, զլ. Ժա՛:

2. Զուանշիրի սեծարդ. հրատարակիչը Հ. Ա. Տե-
րլոյեան ժամանակագրութեան ուշադրութիւն չգնելով՝
յիշեալ Ներսէսը Առատարակեցին կը համարի (յամս
524-533), սակայն այս Յակոբը՝ 524 թուականէն եր-

կու դար առաջ պէտք է սարբի, բանի որ Վրաց եր-
րորդ կաթողիկոսն է. որով պակասովապէս կրնաք ըսել
թէ այդ ձեռնադրողը՝ Ներսէս Պարթեան է որ Զորբորդ
գաբու մէջ կ'ապրէր:

Զորդոյ Վրաց հպակոպոսները կորոյի-
կոս՝ կը կոչուին նոյն պատմէն, և նոյն
պատմէին քով՝ այլ եւս յիշատակութիւն
մը չըլլար, թէ՛ Վրաց հպակոպոսները
այս կամ այն աթոռէն կը ձեռնագրուէին:

Կիւրիոնին (Վրաց կաթողիկոսին) զէպըը
որ տեղի ունեցաւ վեցերորդ դարու սկիզ-
բը՝ կը հաստատէ Հայ կաթողիկոսին Վրաց
առաջնորդը ձեռնադրելու իշխանութիւն ու-
նեցած ըլլալը (և ընտրելու՝ այս անգամ
միայն): Մեր Մովսէս Եղիվարդեցի կա-
թողիկոսին վերջին տարիները Վրաց կա-
թողիկոսը կը վախճանի. ժողովը անհա-
մաձայն կ'ըլլայ նոր մ'ընտրելու և կը
ստիպուի Մովսէսի գրե՛լ՝ որ իրենց կա-
թողիկոս մ'ընտրէ ու ձեռնադրէ. նա Կիւ-
րիոն կ'ընտրէ որ իրեն աշակերտն էր,
ազգաս վրացի Կիւրիոն ժամանակաւ տասն
և հինգ տարի ՚հիկոպոլսոյ մէջ ապրելով՝
Քաղկեդոնի ժողովը կ'ընդունի և կաթո-
ղիկոս ըլլալէն վերջ միայն կը սկսի զայն
քարոզել ժողովորդան. Վրացիք համամիտ
են իրենց Հովաւապետին: Յուրտաւայ և
պիակոպոսը Մովսէս՝ կ'իմացնէ մեր կա-
թողիկոսին Կիւրիոնի քաղկեդոնական ըլ-
լալը. նա նախ խրատական, յետոյ յան-
դիմանական թղթով կը գրէ Կիւրիոնին
մինչև իր մահը որ քիչ վերջ հանդիպե-
ցաւ. Մովսէսի յաջորդները՝ Վրթանէս
տեղապահ և Աքրահամ՝ իրենց նախորդին
նման յանդիմանական նամակները կը շա-
րունակեն, բայց Կիւրիոն նկատութեան
չառնուր. և իշխաններն ալ՝ Կիւրիոնի հետ

կ'որոշեն բաժնուիլ հայ եկեղեցիէն և ձեռ-
նադրութիւնը այլ եւս Հայոցմէ չեն աւ-
նուր, ինչպէս կը գրէ Կիրակոս պատմա-
գիրը, թէ « Մինչևե ցայն վայր (ցկիւրիոն)
ի Հայոց առնուին Վիքը զձեռնադրութիւն
. . . յայնմհետէ բարձաւ ձեռնադրութիւն
Վրաց որ ի Հայոց. զի սկան զՅունոց
թեւակոխեմ »: Յովհաննէս կաթողիկոս իր
պատմութեան մէջ թուղթ մը մէջ կը բերէ,
որ իբրեւ թէ՛ կ. Պուլոյ պատրիարքը ուղ-
ղած ըլլայ իրեն՝ որուն սկիզբը կը գրուի.
« Յաղագս Հայոց, Վրաց և Աղուանից՝
միահամուտ քոյզ հաւատացեալ Հօտից ».
Եթէ Վրացիք երեք դար առաջ բաժնուե-
ցան հայ եկեղեցիէն՝ ինչո՞ւ համար հայ
կաթողիկոսին ոտը կը համարուին:

2. — Հայ կաթողիկոսը ի վաղուց իշ-
խանութիւն ունեցած է նաեւ Աղուանից
եկեղեցւոյն վրայ. և այդ տեսեց գրեթէ
միշտ: Մեր պատմութեան մէջ Աղուանից
երկիրը, մանաւանդ կրօնական տեսակե-
տի Հայաստանի նահանգ մը կը նկատուի
և ո՛չ թէ միայն հայ էին ձեռնադրողները՝
այլ յաճախ նաեւ ձեռնադրեալները: Քա-
շանց թուղթը հայ կաթողիկոսին իշխա-
նութիւն կու տայ որ « Հայոց հայրապետն
ձեռնադրեցեալ կաթողիկոս Վրաց աշխար-
հին . . . եւս և աշխարհն Աղուանից եղիցի
ընդ հնազանդութեամբ Հայոց հայրապե-
տին. և առաջարկութեամբ Աղուանից թա-
գաւորին՝ Հայոց հայրապետն ձեռնադրեա-
ցէ նոցա կաթողիկոս », և Գրիգոր Լու-

1. Մեր եկեղեցին Վրաց հոգևոր գիւտն Մտորա-
պոյտական աստիճան կ'ընծայէ. միւշտիւ Աղուանիցը
Արքեպիսկոպոս կը համարի. (հմտ. Յովհաննէս կաթ.
Ռեխտանէս գիրք Բ. 91. 119). Ստեփանոս Օրբի. Գիրք
Ա. 91. 119, որ է Վրաց աթոռն աստիճան մը բարձր.
ընդհանգառան լրպիման կիւրացցին և Նիզոս Գորտա-
պատիւ՝ Վրաց հպակոպոսը յիջրմագլուի կաթողի-
կոս կը համարին և Աղուանից աթոռը և ոչ իսկ կը
յիշեն. և լրպիման Չուանչիբի համաձայն կը գրէ. « Վիքը
առաւ յԱմսնիս՝ և եղև իմքմագլուի կաթողիկոսմ
նոցա վասն անաստուած այլազգեացն պերութեանն », (էջ 16):

2. Յուրտաւայ կպիակոպոսը կը յանդիմանէ զԿիւ-

րիոն « ի ձեռն պատգամի . . . վասն զի թշնամիք էին
նմա ամենեքեան իշխանքմ և ժողովրդակամքմ հան-
գերձ կիւրոնի » (Ռեխտանէս գիրք Բ. 91. 91):
3. Չարմանալին է որ Վրաց պատմիչը Չուանչիբի՝
քնաւ չի յիշեր ո՛չ այս բաժանումը և ոչ Կիրիոն կա-
թողիկոսը: Կիւրիոն իր մէկ թղթով մէջ, առ Միջառ
Վրկանի մարզպանը ուղղուած, կը յիշէ Ատրնիսոնի
իշխան մը (Ռեխտանէս գիրք Բ. 91. 89). այդ թուա-
կաններուն Չուանչիբի քով կը յիշուի նոյնանուն իշ-
խան մը, որ թէեւ. թաղաւորաց զասակարգէն էր՝ բայց
մթնավար (գրուեալ նախարարաց) կը կոչուի՝ (Չուանչիբի
էջ 97. ի ծանօթ):

սաւորիչ — ըստ կիրակոսի — Արիստակէսը
ձեռնադրեց « եպիսկոպոսական Հայոց ,
Վրաց և Արարից » . սակայն այդպիսի յի-
շատակութիւն մը չենք գտներ հին մատե-
նագրաց քով :

Աղուանից երկիրը ըստ հայ և աղուան
պատմանքի՝ ըրիստոնէութիւնը Եղիշէ տ-
շակիրտէն ընդունեցաւ . որուն վեց եպիսկո-
պոսներ յաջորդեցին¹ . կ'երեւայ անոնց
յաջորդութիւնն ալ մերինին նման զադրած
է . որով երբ Հայաստան ըրիստոնէական
կրօնքով կը ծաղկէր՝ կը խնդրեն Վրթա-
նեսէն որ իր Գրիգորիս որդին իրենց երկ-
րին վրայ կաթողիկոս զնէ, և ինչպէս որ
Քուզանօ կը պատմէ « երէց որդին Գրի-
գորիս ճհաս յեպիսկոպոսութիւնս կողմանց
Աղուանից և Վրաց » (Գպ. Գ. զլ. և) :

Իբրև Հայոց մէկ գաւառ մը՝ Ս. Մես-
րովբ կը դիմէ Աղուանից երկիրը հոն սու-
վրեցնելու և յետոյ « զովմանս յիւրոց ա-
շակերտացն վերակացուս իւրեանց կացու-
ցանէր » . և միշտ հպատակ եղան Աղուանք
Հայ կաթողիկոսին և կրօնական գործերու
մէջ միասիրտ ու իրենց կաթողիկոսը շատ
անգամ ներկայ եղած է մեր եկեղեցական
ժողովոց մէջ : Ասոնք ալ սակայն բաժ-
նուեցան ժամանակ մը Հայ եկեղեցիէն ինչ-
պէս Սիսականի և Վրաց աթոռները, և
պատճառը իրենց աթոռոյն աստիճանին
խնդիրն էր . վասն զի երբ Կիւրիոն կ'ու-
զէր որ իր աթոռը մետրապոլտութենէն

բարձր ըլլայ՝ Աղուանք ալ ցուցուցին Հա-
յոց « զառաքեալ ոմն եկեալ կանխազոյն
բան ի Հայս՝ յԱղուանս, Եղիշէ անուն, և
շինեալ եկեղեցի և ձեռնադրեալ եպիսկո-
պոս Գարձան և նոքա (Աղուանք) առ ժա-
մանակ մի ի Հայոց . ճեղցեալ և Վրացն
բարդակելով զԱղուանս զի ի խնդրեն զար-
քեպիսկոպոսութիւն յԱրարհամէ՛ սաստեաց
նմա » : (Ստ. Օրբել. զԲԲ Ա. զլ. իգ) :
Աղուանից այդ բաժանումն ի Հայոց՝ երեք
և կէս դար տեւեց, մինչև Անանիա կա-
թողիկոսը* (943-967), որուն համար կ'ը-
սէ Վարդան Բարձրբերդցի « Սա բազում
աշխատութեամբ հնազանդեաց զՄիւնիք,
որ զԱղուանիւք թեւակիրէին³, և ձեռնա-
դրեաց արքեպիսկոպոս զԳին Յակոբայ
ապատմրի ... և զԱղուանս ածնալ ի հա-
ւան չնանկարդի իւրեանց կաթողիկոս ա-
ռանց աթոռոյն սբբոյն Գրիգորի » : (Վար-
դան, էջ 89) . այս դէպքիս ամուր փաստ
մ'է՛ մեզ Անանիա կաթողիկոսին հետեւեալ
խորագրով մի թուղթը . « Տեսան Անանիայի
Հայոց կաթողիկոսի՛ յաղագս ոպոստամբու-
րեալ տակն Աղուանից որ ընդ ժամանակս
լեալ իցէ ձեռնադրութեան արտասուր Լու-
սաւորիչ սուրբ աթոռոյն » . այդ թղթոյն
մէջ կը պատմէ Անանիա թէ ինչպէս գնա-
ցած է Աղուանից աշխարհը ու զԳաւիթ
թոտակերից վանականը Գագիկի յաջորդ
ձեռնադրած⁴ : Ստեփ. Օրբելեանս սոյն իրն-
դրոյն վրայ մանրամասն կը գրէ իր գրքին

1. Հմմտ. Մովսես Կալանկատուացի և Միխիմար
Գուշ (Հայպատմութի 292էրորդ յօդուածը) :

2. Ստ. Օրբելեանի գրածէն (զլ. 87), կրնայ հետեւ-
ցուիլ որ Աղուանից այս բաժանումը երկար չի տեւեց,
վասն զի նոյն պատմիչը այս Մի. գլուխ մէջ կ'ըսէ թէ
— խառնով Անանիայի վրայ — Աղուանք « սակաւ ժե-
ամոք յառաջ քան զայս յետո և էին կացեալ, ի վախճանէն
Գեորգայ կաթողիկոսին (+ 898) մինչև ի ժամանակս
այս Անանիայի, յաւուր և հինգ կաթողիկոսաց Մաշտո-
ցի և Յովհաննիսի, Ստեփաննոսի և Եղիսէի և թեո-
զորոսի » : Օրբելեանի նոյն դիտումն մէջ արգէն կ'ըսուի
թէ Աղուանք իրենց առաջին ապստամբութենէն ետք
մեր Ամիստա կաթողիկոսն կը խնդրեն որ ձեռնադրէ
իրենց կաթողիկոսը :

3. Վրդանէս Միւնեաց եպիսկոպոսը, յաջորդ Գի-
գանի՝ որ Յովհաննէս Բ Գարեգեան կաթողիկոսի օրով
բարբոքացաւ . Միւնեաց աթոռոյն վրայ՝ « վասն հրամա-

նաց սրբին Պետրոսի (նախորդին Գիգանի) ոչ հա-
զանդեաց խախտեալ աթոռոյն Հայոց . այլ գնացեալ
յԱղուանս հրամանաւ տեսան Միւր-Արտաշրի Սի-
նեաց գանձերեց իշխանի, առ երջանիկ կաթողիկոսն սեր
Ջաքարիա . և ի նմանե առեւ ձեռնադրութիւն եպիս-
կոպոսութեանն իւ. առ յամէ անմի առեւին զԳիգի
ածութեան մինչև միապետեաց Աբրահամ կաթողիկոս
Հայոց, և բարձր ևակառուութիւնն ի միջոյն » (Ստ.
Օրբել. զլ. իԿ) :

4. Հրատարակուած Արարատ ամսագրի երեսներորդ
տարւոյն մէջ, էջ 129 :

5. Ըստ Միխիմար Գուշի՝ Գագիթը 961ին գահակա-
լած և վասն զի ասոր նախորդը Գագիթ 10 տարի կա-
թողիկոսութիւն կ'ընէ, Գագիկայ նախորդը Սահակ 25
տարի որն 929ին կը յաջորդէ (մմտ. Միխիթ. Գուշի
հատուածը Հայպատմ. յօգ. 292, էջ 385) :

ԵՒ գլխոյն մէջ, Աղուանք գրեթէ ընդ միշտ այս վերջին բաժանումէն ետք հնազանդ եղան հայ կաթողիկոսին, մինչև որ դադրեցաւ ազգութեան հետ՝ նաեւ կաթողիկոսութիւնը:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



† ՀԵՆՐԻԿՈՍ ԳԵԼՅԷՐ



Հերիկոս Գելցեր, նշանաւոր բիւզանդախօս և հայագետ, անդամ բազմաթիւ կանաճներու և ընկերութեանց, յորս և Հայկական Ճինարակերն Սրբոյն Ղազարու, իր մահուամբ ի սուգ կը համակէ գիտական աշխարհը: Իր սիրտը, բարախումէ դադրած, լի էր անկեղծ սիրով մը դէպ ի թշուառ՝ և ինչպէս կը դաւանէր՝ հանճարեղ հայ ժողովուրդը. իր միտքը, սրաթափանց, յաճախ լոյս սփռած է հայ ազգի անցելոյն, ինչպէս նաեւ անոր այն դեռատի անհատներուն վրայ՝ որ աշակերտելու կ'երթային իրեն:

Նա ծնած էր ի Բեռլին, 1847ին:

Գաստիարակուած գերմանական համալսարաններու մէջ, իր ասպարէզը սկսաւ դասախօսութեամբ հին լեզուներու և հին ազգերու պատմութեան՝ ի Հայդէլբերգ և ի Բազէլ:

1878ին նոյն մասնագիտութեանց ուսուցչական անուանուեցաւ Էնայի համալսարանին մէջ: Այնուհետեւ իր գրադմունքն եղաւ գրական լուրջ գործունէութիւն մը, որուն մահը եկաւ վերջ դնելու տարւոյս յուլիս 11ին:

Սոյն հայագէտը մեր ազգին մէջ մեծ հռչակ ստացաւ՝ գլխաւորապէս չորս հեղինակաւոր գործերով:

Գիցյարանարին Հայոց, Թարգմանուած հայերէնի՝ ի Հ. Յովհաննէս վ. Թորոսեանէ, տպ. ի Վենետիկ:

Պատմարիւն Հայոց, Թարգմ. ի Հ. Գ. վ. Գալէմբերանէ, տպ. ի Վիեննա:

Փաստոս Բուզանդ կամ Սկրբնադարարիւն հայ եկեղեցոյ, Թարգմ. ի Հ. Յովհ. վ. Թորոսեանէ, տպ. ի Վենետիկ:

Ռարոսցի յիշարեցական կայսրութեան պատմութիւն, Թրգմ. ի Մեարոբ վ. Տէր-Մովսիսեանէ, էջմիածին:

Առաջին գործերը նուիրուած են բացառապէս հայկական քննութեանց. վերջին գործը միայն՝ համադէտ ակնարկ մ'է բիւզանդական ընդհանուր պատմութեան վերայ, ուր սակայն մեծ զովեստներ կ'ընծայէ Հայոց, երբ առիթ կ'ունենայ անոնց ըրած ազգեցութեանը վրայ իօսելու: Այս գործը, շատ փոքր՝ քանակով, հրատարակուած է իբրեւ ամբողջացնող յաւելուած՝ Գրումնախօսի « Բիւզանդական մատենագրութեան »:

Գելցեր հրատարակած է նաեւ Նիկիոյ ժողով հոյարեան անուանց բազմալեզուեան բաղդատական ցանկը՝ արեւելեան քրիստոնեայ ազգերու ձեռագրաց համեմատ, — հետաքրքրական՝ Հայոց համար. բազմաթիւ գիտական յօդուածներ, ուղեւորութեան տպաւորութիւններ, ուր հայ ազգին նուիրած է այն սէրն և ցաւը, զոր իր դամբանին վրայ՝ իրեն հատուցանելու ցաւայի առիթը կ'ընծայէ այժմ՝ իր Հոյկական ձեռնարակին:

Խ.

Ա Ր Ե Ա Լ Ա Յ Ս

Զամո՛ւմ նրկրի, իւրիօտ սիրով
Կ'ողջունեմ քեզ, Արշալոյս.

Ոչ ստողիրում համար ծակտիղ, —
Գեղիմ վարզեր նրկնարոյս, —

Ոչ գոյմերուզ, որոնք՝ ծաղկանց խոկութիւմ,
Կը թոյն յերկիւմ անմիւթական մի գարում.
Չես մեզ համար քրմոյշ տեսիլ մը պաշտում.
Ամազոմ մ' ես, պատերազմի վե՛հ սաստում.

Խորհրդաճիւղ պայքարմերում մարդկութեամ,
Իր Յոյսմ ես գու, իր Գաղափարմ յաղթական.
Վե՛հ քայնիքով տիեզերք համայն կը գտայ
Երբոր խաղամ մտամերզ օղի դաշմակիմ վրայ.
Ցեղի մ' հոգուով, Արուսեկի շողիմ հետ
Գամ մ'իշտ վայնիլ համոյնլ անզուլ միզկացմամ.—
Գիտեի թաւարմ, որ իոց ի սիրտ քու բազկեղ՝
Վը զըլորի գործումս.

Հ. Կ. Տ. ՍԱԼԱԿԱՆ